



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ  
ԱԱԽԱՐԱՐԻ



«11 «05 2020թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆԱՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000037

Ձեռնարկողը՝

**«Ծղվանսդ Դիվելքիմենթ» ՍՊԸ**  
Ք. Երևան, Հանրապետության 22 շ.

Գործունեությունը՝ Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Բագրեանդ թաղամաս 51 հողամաս հասցեում նախադեսվող բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայց

«Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը փորձաքնական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝

Ա. Ղոնոյան



# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԱԿԱՆ ԵՀՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆԱԾՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000037

<11> 05 2020թ.

**Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Բագրևանդ թաղամաս 51  
հողամաս հասցեում նախատեսվող բնակելի համայիրի կառուցման շրջակա  
միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ներածական մաս.

Ձեռնարկող՝

«Ընկանառ Դիվելքիմենթ» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
նախնական գնահատման հայտ

Գործունեության կատեգորիա՝ «Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝

ք. Երևան, Նոր Նորք վարչական շրջան

«Ընկանառ Դիվելքիմենթ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվում է Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Բագրևանդ թաղամասի 51 հողամասում կառուցել բազմաթափառ ցածրահարկ շենքերի համայիր:

Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 0.729615հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

**Նկարագրական մաս.** Կառուցապատման ենթակա տարածքն իրենից ներկայացնում է ծառաթփային բուսականությունից գուրկ, հարթ, ազատ, պարսպապատ տարածք: Գտնվում է Բագրևանդի և Մոլորվական փողոցների խաչմերուկի մոտ: Մերձակայքում գտնվում են առանձանտներ, ցածրահարկ շենքեր, միջթաղամասային ճանապարհներ:

Մինչև 6մ խորության վրա գրունտային ջրեր չեն հայտնաբերվել: Տարածքում պատմամշակույթային հուշարձաններ չկան:

Նախատեսվում է կառուցել չորս մասնաշենք, որոնք կազմված կլինեն մեկ նկուղային և չորս բնակելի հարկերից: Նկուղային հարկում նախատեսվում է մեկական ավտոկայանատեղի և խորհանոց յուրաքանչյուր բնակարանի համար:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է տվյալ պահուանդիմ առկա կառուցներին և չի հանդիսանում տեսադաշտի խոչընդոտ շրջակա բնակչության համար:

Կառույցի տեխնիկատեսական ցուցանիշներն են.

Հղատարածքի ընդհանուր մակերես – 7296.15քմ

Կառուցապատման մակերես – 2.060քմ



Մայթեր, ճեմուղիներ, ասֆալտապատում - 1.736,15քմ

Կանաչապատման մակերես - 3.500քմ:

Բնակելի համայիրի յուրաքանչյուր բնակարան ապահոված է լինելու շրի, Ելեկտրաէներգիայի և գազի առանձին միացումներով և հաշվիչներով:

Բնակելի շենքերի ելեկտրամատակարարումն իրականացվելու է «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն:

Գազամատակարարումն իրականացվելու է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն՝ «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններով» սահմանված կարգով՝ ապահովելով Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում տեխնիկական կանոնակարգի պահանջները:

Զրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է համաձայն «Վեռլիա Ջուր» ՓԲԸ հետ կնքված պայմանագրի:

Շինարարական աշխատանքների տևողությունը հաշվարկվել է 1.300 օր:

Շինարարության ժամանակ բնառեսուրսից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու, կենցաղային նպատակների համար: Տեխնիկական նպատակով օգտագործման համար ջուրը բերվելու է պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով: Աշխատողների կենցաղային և խմելու նպատակով ջուրը մատակարարվելու է տարաներով: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (16 մարդ) և կազմել  $403\text{մ}^3/2\text{ին.ժամ}$  կամ  $0.31\text{մ}^3/\text{օր}$ : Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի  $975\text{մ}^3/2\text{ին.ժամ}$  կամ  $0.75\text{մ}^3/\text{օր}$ : Ընդհամենը ջրօգտագործումը կկազմի  $1.378\text{մ}^3/2\text{ին.ժամ}$ :

Երկաթբետոնե հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ  $7.900\text{մ}^3$  ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որից  $2.200\text{մ}^3$  ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր, իսկ մնացած  $5.700\text{մ}^3$  կօգտագործվի որպես հետիցք, բարեկարգման և կանաչապատման համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում՝ կենցաղային աղբն է՝  $4.160\text{կգ}$  և շինարարական աղբը՝  $500\text{մ}^3$ : Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի մոտակա աղբավայր:

Նոր կառուցվող բնակելի շենքերի շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված կինեն շինարարական աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագագերի ժամանակավոր արտանետումներով, որոնք կարող են առաջանալ հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվանելիքի այրման արդյունքում: Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները կանխարգելելու և շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված է.

- շինարարական աշխատանքների /փոշու առաջացման աշխատանքներ/ ընթացքում, փոշենստեցման նպատակով, ջրցանի իրականացում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ,

- ջրցանի հաշվարկում այնպես, որ չառաջանա մակերևսութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

- շինարարական գործընթացում ներգրավված տեխնիկայից  նախանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, այս տարածքներում սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակի պահում, ինչպես նաև ժամանակակից տեխնիկական միջոցների ներգրավում,

- օգտագործված մեքենայական յուղերով ու քայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

- աղմուկի և թրթոռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

- ծածկված թափթերով բեռնատարներով գրունտի և սրուն նյութերի տեղափոխում (ավազ, խիճ, հող և այլն),

- փոշու տարածումը կանխարգելելու նպատակով՝ սրուն նյութերի ժամանակավոր կուտակումների և շինարապարակի համապատասխան բարձրությամբ թաղանթով ծածկում,

- շինարարական նյութերը տեղադրում բետոնապատ մակերեսի վրա,

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

- տեղումներից առաջացող շինարարական հոսքաջրերի ուղղորդում պարզաբան։ Անձրևաջրերի նստեցման պարզաբանը գտնվելու է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը հաշվարկվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա։ Պարզաբանում տերի է ունենալու մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը օգտագործվելու է տարածքի ջրանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը հեռացվելու է որպես շինաղբ,

-աշխատանքների ավարտից հետո տարածքների մաքրում և առաջացած թափունների տեղափոխում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

-կանաչապատման իրականացում համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան հատկացնել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 1.225.000 հազ. դրամ։

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը կրարեկարգվի և կկանաչապատվի։ Կանաչապատման նպատակով կօգտագործվի շինարարական աշխատանքներից առաջացող 760 խմ ծավալով հողի բերրի շերտը, որի հանումը, տեղափոխումը, պահեստավորումը և օգտագործումը կիրականացվի օրենքով սահմանված կարգով։

Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը համաձայնեցվել է Երևանի քաղաքապետարանի հետ։ Ըստ կանաչապատման նախագծի տարածքում տնկվելու են հետևյալ ծառատեսակները՝ թխկի՝ 75հատ, եղևնի/տույա՝ 60հատ, գիհի՝ 32հատ, ծաղիկներ և թփեր՝ 60հատ, խոտածածկ՝ 1500քմ։

Կանաչապատ տարածքների ոռոգումն իրականացվելու է ավտոցիստեռներով։

**Պատճառաբանական մաս.** Նախնական գնահատման հայտի փորձաքննական գործնթացին մասնակցել է քաղաքաշինության կոմիտեն։ Դիտողությունների և առաջարկությունների արդյունքում հայտը լրամշակվել է։ Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, << օրենսդրությամբ սահմանված կարգով, Նոր Նորք վարչական շրջանի Բագրեանդ 45 հասցեում անցկացվել են հանրային քննարկումներ գործունեության իրականացման վերաբերյալ, որը հանրության կողմից արժանացել է հավանության։

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում։



## Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել << օրենսդրությամբ սահմանված կարգով՝ երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

- Անհրաժեշտ է ապահովել քաղաքաշինության նախարարի 2014թ. հոկտեմբերի 14-ի N263-Ն հրամանով հաստատված «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» <<Ը 30-01-2014 նորմերի և պահանջների պահպանումը:

- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը:

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ըղվանսդ Դիվելրփմենթ» ՍՊԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Բագրեսանդ թաղամասի 51 հողամասում նախատեսվող բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ



Հ. Ալեքսանյան